



Հայտարարություն մրցույթի մասին  
 Մրցույթի համարը 160/17  
 Պատվիրատուն՝ «Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ» ՓԲԸ-ն, որը գտնվում է քաղաք Գորիս, Գր. Տաթևացու 2 հասցեում, հայտարարում է Մրցույթ:  
 Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել «Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ» ՓԲԸ-ի կարիքների Յուդամաքրման սարքի գնման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):  
 Ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվում պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 90 օր: Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի մրցույթին մասնակցելու հավասար իրավունք, բացառությամբ «Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ» ՓԲԸ-ի մատակարարների/կապալառուների և երրորդ կողմի աշխատանքներ (ծառայություններ մատուցողի) կատարողի ներգրավման քաղաքականության պահանջների: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝ **Տնտեսական հնարավորություններ, Տեխնիկական փորձ, Մարքավորումներ, Անձնակազմ, Որակավորում, Նույնանման պայմանագրերի իրականացման փորձ:** Ընտրված մասնակիցը որոշվում է սահմանված պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր: Պայմանագրի համար վճարումը կիրականացվի Կատարողին առաջարկվող պայմանագրի նախագծում սահմանված կարգով: Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչև սույն մրցույթի հայտերի (տեխնիկական և տնտեսական առաջարկ) բացման նիստը: Ընդ որում, փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել զրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող աշխատանքային օրը: Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում: Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը: Մրցույթի առաջարկները (տեխնիկական, տնտեսական) անհրաժեշտ է ներկայացնել քաղաք Գորիս Գր. Տաթևացու 2 հասցեով, փաստաթղթային ձևով **մինչև 2017թ. դեկտեմբերի 26-ը, ժամը 10:00**, եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն: Տեխնիկական առաջարկն ուսումնասիրելուց եւ հաստատելուց հետո Հանձնաժողովի քարտուղարը մասնակիցներին ուղարկում է հրավեր գնային առաջարկները ներկայացնելու համար: Հայտերի (տեխնիկական, տնտեսական առաջարկների) բացումը տեղի կունենա քաղաք Գորիս Գր. Տաթևացու 2 հասցեում, **2017թ. դեկտեմբերի 26-ին**

**CONTOURGLOBAL®**

Հիդրո կասկադ



**Ժամը 10:30-ին:** Մասնակիցների **Տնտեսական հնարավորությունների, Տեխնիկական փորձի, Սարքավորումների, Անձնակազմի, Որակավորման, Նույնանման պայմանագրերի իրականացման փորձի** վերաբերյալ պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները հայտով (տեխնիկական, տնտեսական առաջարկ) պետք է պատվիրատուին ներկայացնեն սույն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների գծով մասնագետ Է.Մուղումյանին:

**Հեռախոս՝ 0284 50014**

Էլ. փոստ [erik.mughumyan@contourglobal.com](mailto:erik.mughumyan@contourglobal.com)

Պատվիրատու՝ «Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ» ՓԲԸ

*<Քոնթուրգլորբալ հիդրոկասկադ> ՓԲԸ*

Հ Ր Ա Վ Ե Ր

<Քոնթուրգլորբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի կարիքների համար Յուդամաքրման սարքի  
ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթի

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն <Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի, (այսուհետև՝ Պատվիրատու)՝ կարիքների համար՝ Յուդամաքրման սարքի ձեռքբերման նպատակով 160/17 եզակի հղման համարով անցկացվող մրցույթի ընթացակարգի (այսուհետև՝ ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է <Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի գնումների ուղեցույցի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

<Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի գնումների բաժնի պատասխանատու անձի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ [erik.mughumyan@contourglobal.com](mailto:erik.mughumyan@contourglobal.com)

ՄԱՍ 1

**1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Գնման առարկա է հանդիսանում <Քոնթուրգլորբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի կարիքների համար՝ **Յուղամաքրման սարքի** ձեռքբերումը:

<i>համարը</i>	<i>Ապրանքների անվանումը</i>
1	Յուղամաքրման սարք

Յուղամաքրման սարքի ձեռքբերման տեխնիկական բնութագրերը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի ՄԱՍ 2:

Սույն հրավերով նախատեսված աշխատանքների համար պահանջվում է հետևյալ լիցենզիան.

<i>Չափաբաժինների համարները</i>	<i>Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).</i>
<b>1</b>	<b>2</b>
	<b><u>Չի պահանջվում</u></b>

## 2. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

2.1 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) Տնտեսական հնարավորություններ(Ֆինանսական միջոցներ),

2) Տեխնիկական փորձ

3)Անձնակազմ/աշխատանքային ռեսուրսներ/

4/Որակավորում

5/Նույնանման պայմանագրերի իրականացման փորձ.

## 3.ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում ընթացակարգի տեխնիկական առաջարկ/այսուհետ հայտ/:

Ընթացակարգի հայտերը ներկայացվում են մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

3.2 Ընթացակարգի հայտ անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան մինչև 2017թ-ի դեկտեմբերի 26-ը, ժամը՝ <<10:00>>-ն, ք. Գորիս, Գր. Տաթևացու 2 հասցեով: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է գնումների գծով մասնագետ է. Մուղումյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

3.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

Տեխնիկական առաջարկ

Տեխնիկական փորձը

Անհրաժեշտ սարքավորումները

Անձնակազմ/աշխատանքային ռեսուրսներ

Որակավորումը

Նույնանման պայմանագրերի իրականացման փորձը

#### **4. ՀԱՅՏԵՐԻ/ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԲԱՅՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) բացման նիստում՝ 2017թ-ի դեկտեմբերի 26-ին ժամը <<10:30>>-ին, ք.Գորիս Գր. Տաթևացու 2 հասցեում:

4.2. Առաջարկի ներկայացման վերջնաժամկետի լրանալուց հետո հանձնաժողովը հավաքվում և բացում է բոլոր ներկայացված առաջարկները: Առաջարկները ներկայացրած ընկերությունների ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հանձնաժողովի կողմից առաջարկները բացելու պահին: Հանձնաժողովը ուսումնասիրում և գնահատում է ներկայացված տեխնիկական առաջարկները, որից հետո հաստատում կամ մերժում է դրանց համապատասխանությունը տեխնիկական պահանջներին, ներառյալ առաքման ժամը և երաշխիքային պայմանները: Այն պարագայում, եթե ներկայացված փաստաթղթերի հիման վրա հնարավոր չէ որոշել առաջարկի համապատասխանությունը, գնումների բաժինը թեկնածուին խնդրում է ներկայացնել հավելյալ մանրամասներ և ապացույցներ:

Տեխնիկական առաջարկն ուսումնասիրելուց և հաստատելուց հետո Հանձնաժողովի քարտուղարը մասնակիցներին ծանուցում է տնտեսական առաջարկների բանակցման գործընթացում ներկայացնելու գնային առաջարկներ՝

Էլեկտրոնային եղանակով: Համակարգը կառավարող կամ գործընթացի դիտորդ հանդիսացող անձը կարող է տեսնել առաջարկված գները միայն առաջարկների ներկայացման վերջնաժամկետի լրանալուց հետո: Առաջարկների ներկայացման վերջնաժամկետի լրանալուց հետո դրանք դասակարգվում են ըստ գնի: Գնային առաջարկների բանակցությունների երկրորդ փուլը կարող է մեկնարկել բոլոր մասնակիցներին պատշաճ կերպով տեղեկացնելուց և նրանցից երկրորդ փուլում մասնակցելու վերաբերյալ գրավոր հաստատում ստանալուց հետո: Այս փուլում Առաջին փուլի (Սկզբնական առաջարկ) ամենացածր առաջարկված գինը հայտարարվում է բոլոր մասնակիցներին՝ առանց տրամադրելու որևէ տեղեկություն այդ գինն առաջարկած մասնակցի մասին: Մասնակիցները կարող են առաջարկել ներկայացված գնից ավելի ցածր ողջամիտ գին նախօրոք սահմանված ժամկետներում: Առավել ցածր գին առաջարկած մասնակիցը հանձնաժողովի որոշմամբ ճանաչվում է ընտրված մասնակից/ հաղթող: Երկրորդ փուլում առաջարկների ներկայացման ժամկետը լրանալուն պես մշակվում է հաշվետվություն, որտեղ ներկայացված են մրցույթի արդյունքները և Կապալառուի ընտության առաջարկը: Հաշվետվությունը ստորագրվում է հանձնաժողովի բոլոր անդամների և հաստատվում էլեկտրակայանի տնօրենի կողմից: Էլեկտրակայանի տնօրենի կողմից հաշվետվությունը հաստատելուց հետո 5 օրվա ընթացքում մրցույթի բոլոր մասնակիցները պաշտոնապես տեղեկացվում են առաջարկների դասակարգման և Մատակարարի ընտրության մասին: Պայմանագիրը ուղարկվում է ընտրված Մատակարարին ստորագրման համար:

Մրցույթին վերաբերող ամբողջ տեղեկատվությունն ու փաստաթղթերը արխիվացվում են և կցվում են Գնման պատվերին/Պայմանագրին:

## 5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

**5.1 Ընտրված մասնակցի հետ կնքվում է Պայմանագիր <Քոնթուրզլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի Գնումների ուղեցույցի համապատասխան, ընտրված**



մասնակցին մրցույթի արձանագրության ծանուցումից 20 (քսան) օրացույցային օրվա ընթացքում:

## 6. ՀԱՅՏԵՐԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Հայտը/տեխնիկական առաջարկը/ ներկայացվում է փաստաթղթային ձևով և Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը /տեղեկությունները/, կազմվում են բնօրինակից/ ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և 2 օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են <<բնօրինակ>> և <<պատճեն>> բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ Մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

6.2 Սույն հրահանգի 6.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են

- ա) Պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).
- բ) Մրցութային ընթացակարգի ծածկագիրը.
- գ) <<չբացել մինչև հայտերի բացման նիստը>> բառերը.
- դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը

6.3 Սույն հրահանգի 6.1 և 6.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

<p style="text-align: center;"><b>Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ ՓԲԸ</b> <b>ապրանքների մատակարարման պայմանագիր</b></p> <p>-----2016</p> <p>Սույն պայմանագիրը (այսուհետ՝ <b>Պայմանագիր</b>) կնքվել է ք. ---ում, -----ին հետևյալ կողմերի միջև՝</p> <p>1. <b>«Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ</b>, գրանցված Երևան քաղաքում, Մելիք-Ադամյան 2/2 հասցեում, ՀՎՀՀ՝ 02619957, ի դեմս տնօրեն Արա Հովսեփյանի /արտադրողության ղեկավար Գենադիյ Տուրանովի, ով գործում է լիազորագրի հիման վրա (այսուհետ՝ <b>Գնորդ</b>) և</p> <p>2. -----, գրանցված ----- քաղաքում, -----հասցեում, ՀՎՀՀ՝ -----, ի դեմս ---- (այսուհետ՝ <b>Մատակարար</b>) հետևյալի մասին.</p>	<p style="text-align: center;"><b>CONTOURGLOBAL HYDRO CASCADE CJSC</b> <b>CONTRACT FOR SUPPLY OF GOODS</b></p> <p>-----2016</p> <p>This Contract (hereinafter referred to as the “Contract”) is executed in -----, on -----by and between:</p> <p>1. <b>“CONTOURGLOBAL HYDRO CASCADE” CJSC</b>, having its seat and registered office at Yerevan city, 2/2 Melik Adamyany St., registered under TIN: 02619957, represented by by Ara Hovsepyan, in his Capacity of Director/Plant manager Gennady Turanov, acting on behalf of the company pursuant to a Power of Attorney/, hereinafter referred to as <b>Buyer</b>,and</p> <p>2. -----, having its seat and registered office at ----- registered under TIN -----, represented by ----- in his capacity of -----, hereinafter referred to as <b>Supplier</b> for the following:</p>
--	---

**Սահմանումներ.**

Սույն Պայմանագրի շրջանակներում հետյալ հասկացություններն ու արտահայտությունները ունեն հետևյալ նշանակությունը.

**Բանկային օր՝** այն օրը (բացառությամբ կիրակի, շաբաթ և պաշտոնական տոն օրերի), երբ Հայաստանում բանկերը աշխատում են սովորական բանկային գործարքներ իրականացնելու համար:

**Ապրանք՝** սույն պայմանագրի

շրջանակներում մատակարարվող ----- համաձայն առաջարկի և տեխնիկական բնութագրի, որոնք կցված են սույն Պայմանագրին որպես հավելվածներ (Հավելված 2 և 3):

**Երաշխիքային ժամկետ**

Ժամկետ, որի ընթացքում Մատակարարը պարտավորվում է Ապրանքի և/կամ դրա ցանկացած մասի/մասերի հետ կապված թերություններ ի հայտ գալու դեպքում վերացնել դրանք կամ փոխարինել թերությամբ Ապրանքը նոր Ապրանքով՝ սույն Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով.

**Թերություններ՝** ապրանքի վնասվածք և/կամ թերություն և/կամ անսարքություն և/կամ անհամապատասխանություն(ներ) սույն

**Definitions**

In this Contract, the following words and phrases shall have the following meanings:

**Business Day-** a day (other than a Saturday or a Sunday or official holiday) on which banks are generally open for the conduct of normal banking business in Armenia;

**Goods -** ----- to be delivered under this Contract as per offer and technical specification attached to this Contract as appendixes (Appendix 2 and 3);

**Warranty Period-** the period of time during which in case Deficiencies arise in regard with the Goods and/or any part(s) thereof, the Supplier shall eliminate such Deficiencies in the Goods or replace the defective Goods, as set forth by the present Contract.

**Deficiencies -** any default and/or defect and/or malfunctioning and/or non-compliance(s) of the Goods to the Purpose defined by this Contract and/or to applicable legislation requirements and/or to requirements which are usually presented to such Goods and/or to Documentation of the Goods and/or to the

Պայմանագրով սահմանված Օգտագործման Նպատակին և/կամ սույն Պայմանագրին և/կամ կիրառվող օրենսդրության պահանջներին և/կամ սովորաբար այդպիսի Ապրանքին ներկայացվող պահանջներին և/կամ Ապրանքի Փաստաթղթերին և/կամ սույն Պայմանագրի Հավելված 2-ում ներկայացված Ապրանքի բնութագրին և տեխնիկական պահանջներին:

**Փաստաթղթեր՝** ամբողջ գրավոր տեղեկատվությունը, տեխնիկական անձնագիրը, որակի հավաստագիրը, շահագործման վերաբերյալ հրահանգները, գծագրերը, շահագործման ձեռնարկները և այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են Ապրանքի օգտագործման, տեղադրման և/կամ օգտագործման համար, եթե Կողմերը համաձայնվել են Մատակարարի կողմից նման Փաստաթղթերի տրամադրման մասին:

**Ընդունման-Հանձնման Ակտ**

Սույն Պայմանագրի համաձայն Մատակարարի կողմից Ապրանքի հանձնումը և Գնորդի կողմից դրա ընդունումը հավաստող և Կողմերի կողմից ստորագրված փաստաթուղթ:

**Օգտագործման Նպատակ**

Ապրանքը օգտագործվելու է Հավելված 2-ին համապատասխան:

**1. Պայմանագրի առարկան**

technical characteristics and technical requirements, as defined in Appendix 2 of this Agreement .

**Documentation**-all written information, technical passport, certificate of quality, instructions for exploitation, schemes , exploitation commands, and other documentation, which is necessary for the use, installation and/or functioning of the Goods if Parties agreed on this Documentation provision by the Supplier,

**Acceptance Protocol** - a document executed between the Parties which certifies the proper delivery of the Goods by the Supplier and acceptance of them by the Buyer.

**Purpose**

The Goods will be used by the Buyer in accordance with Appendix 2.

**1. Subject of the contract**

**1.1.** Under this Contract the Supplier shall transfer the Goods that correspond to the terms foreseen in the Appendixes 2 and 3 of this Contract to the property of the Buyer, and the Buyer shall accept the Goods and pay for them, in accordance with the terms and conditions set forth in this Contract.

1.1. Մատակարարը պարտավորվում է Գնորդին որպես սեփականություն հանձնել սույն Պայմանագրի Հավելվածներ 2-ով և 3-ով սահմանված պայմաններին համապատասխանող Ապրանք, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա դիմաց սույն Պայմանագրով նախատեսված չափով և կարգով:

## 2. Գինը և վճարումը

2.1 Ապրանքի ընդհանուր գինը կազմում է ----- առանց ԱԱՀ-ի: Գինը ներառում է Ապրանքի առաքումը Պատվիրատուի տարածք, ինչպես նաև փոխադրման, մաքսազերծման և ապահովագրման բոլոր ծախսերը, հարկերը և տուրքերը:

2.2 Ապրանքի համար վճարումը կատարվում է Ընդունման-Հանձնման Ակտը երկկողմանի ստորագրելուց հետո 20 օրվա ընթացքում՝ ներկայացված և հաստատված հաշիվ-ապրանքագրի և Ընդունման-Հանձնման Ակտի հիման վրա:

2.3 Սույն Բայմանագրի շրջանակներում կատարվելիք բոլոր վճարումները իրականացվում են բանկային փոխանցման միջոցով՝ ՀՀ դրամով: Մատակարարի բանկային վճարները կատարում է Մատակարարը, իսկ Պատվիրատուի բանկային վճարները կատարում է Պատվիրատուն:

## 3 Պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում

3.1 Պայմանագրի կնքման պահին, Մատակարարը պարտավորվում է իր պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովել Պայմանագրի ընդհանուր գնի --- (-----) %-ի չափով՝ բանկային երաշխիքի կամ դրամական դեպոզիտի ձևով:

## 2. Price and payment

2.1. The Contract Price of the Goods amounts to ..... VAT excluded. The price includes delivery of the Goods to the Buyer's Site and all transportation costs including, customs expenses and fees, taxes, and insurances.

2.2. The payment for the Goods shall be completed within 20 days from mutual signing of Acceptance Protocol, based on presented and signed invoice and Acceptance Protocol.

2.3. All payments according to this Contract shall be made through bank transfers in AMD. The bank fees at the Supplier's bank are at the Supplier's expense, the bank fees at the Buyer's bank are at the expense of the Buyer.

## 3. Performance guarantee

3.1. At the signing of this Contract, the Supplier shall secure the preformance of its obligations by submitting a banking guarantee or depositing on the banking account, in the amount of -----% /- ----/ of the Contract Price .

3.2. The banking guarantee or the deposit amount shall be returned to the Supplier within

3.2 Պարտավորությունների պատշաճ կատարման բանկային երաշխիքը կամ դեպոզիտ վճարված գումարը հետ է վերադարձվում Մատակարարին Ընդունման-Հանձնման Ակտի երկկողմնի ստորագրման պահից 30 /երեսուն/ օրվա ընթացքում:

**4 Առաքման պայմաններն ու ժամկետները**

4.1. Ապրանքը առաքվում է հետևյալ կերպ.  
----- (մեկ մասնաբաժնով կամ մի քանի մասնաբաժնով )

4.2 Մատակարարը պարտավորվում է Ապրանքը մատակարարել Գնորդին սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից -----օրվա ընթացքում:

4.3 Ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքը և ռիսկերը Գնորդին են փոխանցվում Ընդունման-Հանձնման Ակտը ստորագրելու պահից:

4.4 Մատակարարը, Ապրանքը Գնորդին հանձնելիս, դրա հետ միաժամանակ Գնորդին պետք է հանձնի նաև դրա պատկանելիքները, ինչպես նաև դրան վերաբերող բոլոր Փաստաթղթերը:

4.5 Մատակարարվող նյութը առաքվելու է հետևյալ հասցեով.  
ՀՀ, ք. Գորիս, Տաթևացու 2, ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ ՓԲԸ:

4.6 Մատակարարը պարտավորվում է տեղեկացնել Պատվիրատուին առաքման ամսաթվի մասին առաքումից առնվազն մեկ օր առաջ հետևյալ էլեկտրոնային հասցեով.  
-----

4.7 Ապրանքը ընդունվելու է ժամը 9:30 մինչև 17:00 ընկած ժամանակահատվածում:

**5. Ընդունում**

5.1 Ընդունման-Հանձնման Ակտը ստորագրվում է Գնորդի կողմից, եթե Ապրանքը առաքվել է պատշաճ և ամբողջությամբ Հավելված 2-ին

30 days /thirty days/ after bilateral signing of the Acceptance Protocol.

**4. Terms of delivery**

4.1. The Goods shall be delivered in the following way: ..... (one delivery or in lots).

4.2 The Supplier is obliged to supply the Goods to the Buyer within -----days upon entering into force of this Contract.

4.3 The ownership rights and risks are passing to the Buyer upon signature of the Acceptance Protocol.

4.4 The Supplier shall pass the Goods with all its accessories, as well as with all Documentation.

4.5 The Goods shall be delivered to the following address: ContourGlobal Hydro Cascade CJSC, 2 Tatevatsi Street, Goris, Armenia.

4.6 The Supplier shall notify the Buyer of the delivery date no later than one day prior to the day of delivery to the following email:  
.....

4.7 The Goods shall be received at the time interval between 9:30 and 17:00h.

համապատասխան, ներառյալ բոլոր հայտնաբերված թերությունների վերացումը:

5.2 Ապրանքների ընդունումը չի սահմանափակում Գնորդի իրավունքները երաշխիքային սպասարկման հետ կապված:

5.3 Այն դեպքում, երբ Ապրանքի ստուգման արդյունքում հայտնաբերվում են թերություններ, Կողմերը կնքում են թերությունների համատեղ ակտ: Թերությունները հայտնաբերելու դեպքում Գնորդը կարող է Մատակարարից պահանջել ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավել քան 15 օրվա ընթացքում անհատույց վերացնելու Ապրանքի թերությունները կամ պահանջել փոխարինել թերությամբ Ապրանքը նոր Ապրանքով և/կամ պահանջել համաչափորեն նվազեցնել Ապրանքի գինը և/կամ թերությունների վերացումը Մատակարարի հաշվին կամ Ապրանքի առաքումը հանձնարարել այլ անձանց:

5.4 Թերությունները վերացնելուց հետո Ապրանքի ստուգումը և ընդունումը իրականացվում է նույն կարգով, ինչպես սկզբնական մատակարարման ընդունումը:

5.5. Եթե մատակարարված Ապրանքի մի մասն է թերությամբ, Գնորդն իրավունք ունի ընդունել միայն այն Ապրանքը, որը չունի թերություններ:

5.6. Ապրանքից հրաժարվելու դեպքում, դրա համար սույն Պայմանագրով վճարվելիք գումարը ենթակա չէ վճարման, իսկ վճարված լինելու դեպքում ենթակա է վերադարձման ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի քան Գնորդի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելու պահից 10 (տաս) օրվա ընթացքում: Հրաժարված Ապրանքի հետ կապված ծախսերը և ռիսկերը կրում է Մատակարարը: Մատակարարը պարտավոր է իր հաշվին և պատասխանատվությամբ ետ վերցնել այդպիսի Ապրանքը:

5.7. Այն դեպքում, երբ թերություն ունեցող Ապրանքի համար Գնորդը պահանջում է թերությունների վերացում կամ Ապրանքի

## 5. Acceptance

5.1 Acceptance Protocol shall be signed by the Buyer if the Goods are delivered properly and in full in compliance with Appendix 2, including elimination of all discovered Deficiencies.

5.2 The acceptance of the Goods shall be without prejudice to warranty rights of the Buyer under this Contract.

5.3 If during acceptance of Goods any Deficiencies are discovered, mutual deficiencies act should be executed. In that case the Buyer is entitled at its discretion to require elimination of the Deficiencies or replacement of the Goods with Deficiencies within a reasonable term, but not more that within 15 days and/or to require proportional reduction of the price of the Goods and/or assign the elimination of the Deficiencies or delivery of the Goods to third persons at the cost of Supplier.

5.4 After the elimination of the Deficiencies the acceptance is made in the same way as for the initial delivery.

5.5 If only part of the Goods is with Deficiencies, the Buyer is entitled to accept only the Goods which are without Deficiencies.

5.6 In case the Buyer rejects the Goods, the price will then not be due for payment. The payments that the Supplier may possibly have already received for the rejected Goods must be refunded to the Buyer within 10 (ten) days upon receipt of the request of the Buyer. The cost and risks incurred in relation to such rejected Goods shall be borne by the Supplier. The Supplier at its own cost and liability must take the rejected Goods back.

փոխարինում պատշաճ Ապրանքով, այդպիսի Ապրանքի համար վճարումը չի կատարվում մինչև դրանց պատշաճ մատակարարումը Մատակարարի կողմից և ընդունումը Գնորդի կողմից:

## 6. Երաշխիքային ժամկետ

6.1. Սույն պայմանագրի առարկա հանդիսացող Ապրանքի երաշխիքային ժամկետը կազմում է \_\_\_\_\_ սկսած Պատվիրատուի կողմից ապրանքն ընդունելու և Ընդունման-Հանձնման Ակտը Գնորդի կողմից ստորագրման ամսաթվից:

6.2 Երաշխիքային ժամկետի ընթացքում Մատակարարը պարտավոր է՝

6.2.1. վերացնել Ապրանքի կամ դրա բաղկացուցիչ մասի/մասերի ցանկացած տեսակի, ձևի, բնույթի Թերություն.

6.2.2. իրականացնել անսարք Ապրանքի կամ դրա բաղկացուցիչ մասի/մասերի փոխարինումը պատշաճ որակի նույն Ապրանքով.

6.2.3. իր հաշվին իրականացնել Ապրանքի կամ դրա այն մասի/մասերի փոխարինումը, որը ճանաչվել է թերի Գնորդի կողմից:

6.3. Թերություն ունեցող Ապրանքի կամ դրա բաղկացուցիչ մասի/մասերի Երաշխիքային Ժամկետը երկարաձգվում է այն ժամանակով, որի ընթացքում Ապրանքը կամ դրա բաղկացուցիչ մասը/մասերը չի կարող օգտագործվել դրանում հայտնաբերված Թերությունների պատճառով: Փոխարինված Ապրանքի կամ դրա մասի համար սահմանվում է նույն չափով Երաշխիքային Ժամկետ, ինչ սկզբնական Ապրանքի համար՝ հաշվարկված սույն Պայմանագրով սկզբնական Ապրանքի համար սահմանված կարգով:

6.4 Կողմերը համաձայնության են գալիս այն մասին, որ Թերությունների ուղղումը Երաշխիքային Ժամկետի ընթացքում իրականացվում է առանց Գնորդի կողմից որևէ վճարի՝ Մատակարարի հաշվին:

5.7 In the event for the Goods with Deficiencies the Buyer requests elimination of Deficiencies or replacement of the Goods with Deficiencies with proper Goods, the payment for such Goods shall not be made until the Goods with Deficiencies are properly delivered by the Supplier and accepted by the Buyer.

## 6. Warranty period

6.1 The warranty period of the delivered Goods subject to this Contract shall be ..... days from the date of acceptance of the Goods and signature of the Acceptance Protocol by the Buyer.

6.2 Within Warranty Period the Supplier is obliged to:

6.2.1 eliminate Deficiencies of any kind, nature, form of the Goods or of any part thereof;

6.2.2 perform repair or replacement of the defective Goods or of any part thereof with the same Goods of proper quality;

6.2.3 perform at its own expenses the repair of the Goods or any part thereof which has been proven to be defective by the Buyer.

6.3 The Warranty Period of the Goods with Deficiencies or of any part(s) thereof is prolonged for the period within which the Goods cannot be used due to discovered Deficiencies. The Warranty Period for the replaced Goods or of any part(s) thereof shall be the same as for original Goods calculated as set forth in this Contract for the initial Goods.



6.5 Երաշխիքային ժամկետի ընթացքում Թերությունների վերացումը կամ Ապրանքի կամ դրա մասի/մասերի փոխարինումը իրականացվում է ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավել քան 15 օրում:

6.6 Մատակարարը երաշխավորում է, որ սույն Պայմանագրով Գնորդին հանձնվող Ապրանքը լիովին համապատասխանում է սույն Պայմանագրով սահմանված պահանջներին և պայմաններին:

### 7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Գնորդն իրավունք ունի Մատակարարի՝ սույն Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետը խախտելու դեպքում, կետանցի յուրաքանչյուր օրվա համար պահանջել վճարել տույժ՝ մատակարարվող Ապրանքի ընդհանուր գնի 0.2 տոկոսի չափով:

7.2 Եթե Մատակարարը չի պահպանում Ապրանքի Թերությունների վերացման կամ Թերությամբ Ապրանքը նոր Ապրանքով փոխարինելու ժամկետը, Գնորդն իրավունք ունի պահանջել վճարել տույժ ուշացման յուրաքանչյուր օրվա համար մատակարարվող Ապրանքի ընդհանուր գնի 0,1 տոկոսի չափով մինչև Թերությունների ամբողջական վերացումը:

### 8. Պայմանագրի դադարեցում

8.1 Գնորդը իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանի հրաժարվել սույն Պայմանագրից այդ մասին 7 (յոթ) օր առաջ տեղեկացնելով Մատակարարին՝ առանց հետագա ֆինանսական և այլ պարտավորության, բացառությամբ չկատարված պարտավորությունների, որոնց

6.4 The correction of the Deficiencies within the Warranty Period is carried out at no cost by the Buyer, at the expenses of the Supplier.

6.5 The elimination of the Deficiencies or replacement of Goods with Deficiencies or any part thereof within Warranty Period is to be done within reasonable timeframe, but no more than within 15 days.

6.6 The Supplier warrants that the Goods supplied to the Buyer under this Contract fully correspond to the requirements and terms as defined by this Contract and warrants to deliver the Goods with proper quality and in accordance with the Purpose defined by this Agreement.

### 7. Responsibilities of the Parties

7.1 For violation of the supply terms defined by this Contract the Buyer is entitled to require from the Supplier to pay a penalty for delinquency of each day in the amount of 0.2% of the total price of the Goods.

7.2 In the event the Supplier does not respect the term for elimination of the Deficiencies or replacement of the Goods with Deficiencies in the defined timelines, the Buyer is entitled to request a payment of penalty for each day of delay in the amount of 0.1 % of the total price of the Goods until full elimination of the Deficiencies.

մասով Պայմանագիրը դադարում է դրանց ամբողջական կատարման պահից:

8.2 Մատակարարի կողմից սույն Պայմանագրի որևէ դրույթ խախտելու դեպքում, Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծել սույն Պայմանագիրը՝ այդ մասին 7 օր առաջ գրավոր ծանուցելով Գնորդին և նրան տրամադրելով իր հայեցողությամբ մինչև 30 (երեսուն) օր ժամանակ թերությունները վերացնելու համար: Եթե Գնորդը չի վերացնում խախտումը սահմանված ժամկետում, ապա Պայմանագիրը լուծված է համարվում թերությունները վերացնելու ժամկետը լրանալու պահից, առանց որևէ այլ իրավական ձևակերպումներ կատարելու կամ դատարան դիմելու անհրաժեշտության:

8.3 Սույն Պայմանագրի լուծման պահից Կողմերի բոլոր հետագա իրավունքներն ու պարտավորությունները դադարում են, բացառությամբ Կողմերի 1) սույն Պայմանագրի լուծման օրվա դրությամբ կամ դրանից հետո վճարման ենթակա բոլոր գումարների, 2) սույն Պայմանագրով սահմանված որևէ այլ պարտավորության, որը ուժի մեջ է մտնում լուծման ամսաթվից հետո կամ որը պետք է կատարվի Պայմանագրի լուծման հետ կապված կամ դրա հետևանքով կամ որի գործողությունը շարունակվում է Պայմանագրի լուծումից հետո (օր.՝ երաշխիքի և երաշխիքային սպասարկման հետ կապված պարտավորություններ և այլն): Սույն Պայմանագիրը դադարեցվում է

8.4 Սույն Պայմանագրի 8.2 կետով սահմանված հիմքով Պայմանագրի լուծման դեպքում Գնորդն իրավունք ունի Մատակարարից պահանջել 7.1 կետով սահմանված տույժը:

## 9. Ֆորս մաժոր

9.1 Կողմերն ազատվում են սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման

## 8. Contract termination

